

չարագլուխ սատանան ինձի կը հակառակի: Բայց կը յուսամ մեր Տիրոջմէն, Յիսուս Քրիստոսէ, որ ըսաւ՝ ով որ խնդրէ պիտի գտնէ՝ թէ բարեխօսութեամբ Ս. Աստուածածնին եւ աղօթքներով Ս. Քահանայապետներուն, Սեղբեստրոսի եւ Գրիգորի, պիտի ճզմեմ հակառակող սատանային գլուխը, եւ պիտի գամ համբուրելու Գլխաւոր Առաքելոց սուրբ մասունքները եւ ողջունելու Եկեղեցւոյ Կենդանի եւ սուրբ Պետրոսը:»

«Այս բոլորին համար ողջ լեր շընորհօքն Աստուծոյ Ամենակալին:»

«Գրեցաւ յամի 1128 կամ 1679 յաւուր 23րոմ Նոյեմբերի ի Կ. Պոլիս առ Դրանն Ս. Աստուածածնիս:»

ԿՆԻՔ

Նամակին վրան գրուած է. «Առ ձեռս Առաքելի Վ.ի, Հոռոմ կամ այլուր ուր ալ գտնուի:»

Չարմանալի է որ Յակոբ Ջուղայեցի իր այս խիստ կարեւոր նամակը գրած ըլլայ այդքան անորոշ հասցէով, թոյնքն «Առաքելի վարդապետի, Հոռոմ կամ այլուր ուր ալ գտնուի»: Բացորոշ կերպով նամակը յանձնելի չէ ուրիշ որեւէ մէկուն բացի Առաքել վարդապետէն: Այսպէսով միայն Առաքել վարդապետ կրնար նամակը ստացած ըլլալ եւ մէջտեղ հանողը ըլլալ: Առաքել կը ջանար իր սաղմին մէջ խեղդել իր կապարելիք կեղծիքը իբր կեղծիք: Այսինքն քանի որ ինքը պիտի պատրաստէր նամակը պէտք էր այնպէս մը հասցէագրուեր նամակը որ իր կողմէն ալ մէջտեղ հանուած ըլլալը արդարացուէր: Սակայն Առաքել կ'երեւի չխորհեցաւ թէ կրնան չարցնողներ ըլլալ թէ ինչո՞ւ Յակոբ Դ. երբ Հոռոմ կը գրէր, մանաւանդ երբ իբր թէ դաւանական այսքա՛ն կարեւոր պարունակութեամբ նամակ մը, Առաքելի կը գրէր եւ ոչ թէ Հաւատոյ Տարածման Ժողովին կամ նոյն իսկ Պապին: Նամակին պարունակութիւնը Հոռոմի իր հնազանդութեամբ, Հոռոմէադաւանութեան իր հաւատքով, Հոռոմի վեհապետութեան իր չկարենալ գալու արդարացումներով, անյարակոյս աւելի պատ-

շած կ'ընէին անոր ուղարկուելը Պապին կամ Հաւատոյ Տարածման Ժողովին եւ ոչ թէ Առաքելին:

Բայց կարեւոր է որ մենք հոս նախ ներկայացնենք նամակին ստացող ներկայացուած Առաքել վարդապետը: Հաւատոյ Տարածման Ժողովին Դիւանը սազրանցումը ունի նամակին ստացման անթիւ: «Այս է թարգմանութիւնը (լատիներէն) այն նամակին, զոր գրեց Յակոբ Հայոց Կաթողիկոսը, որ կը կոչուի Պատրիարք Մեծ Հայքի, առ Առաքել Արքեպիսկոպոս Նախիջևանի:»

Առաքել, որ բնիկ Շոռոթեցի էր, կ'ըսուի կոչուած է նաեւ Բոպիկ: Մեռած է Հոռոմ եւ Հոռոմի հոռոմէադաւան Հայոց Ս. Մարիամ Եզրպտացի Եկեղեցւոյն մէջ թաղուած է: Ունի տապանադիր, որուն մասին մենք յետոյ իր կարգին պիտի խօսինք: Տապանադիրը հրատարակած է Հ. Ղ. Ալիշան ՍԻՍԱԿԱՆԻ մէջ (էջ 352) առաջին անգամ եւ յետոյ ալ Հայր Գալէմբեարեան Հանդէս Ամսօրեայի մէջ (1914, էջ 709-710): Տապանադիրն համաձայն Առաքել մեռած է վեց Օգոստոս 1680-ին երբ 67 տարեկան էր: Ուրեմն ծնած է 1613-ին ատենները: Իր ծնողաց եւ պարագաներուն մասին տեղեկութիւն կը պակսի: Նոյն տապանադիրն լատին արձանագրութիւնը կը յիշէ զայն 1648-ին իբր վարդապետ եւ եպիսկոպոս, երբ ուրեմն հաղիւ 35 տարեկան կար ան:

Ս. Ղազարի հաւաքածոյին թիւ 23 Աստուածաշունչը (Հ. Սարգիսեանի ցուցակ) ունի 1653 թուակնոյով սա յեղատակութիւնը. «Առաքել անուամբ կոչեցեալ վարդապետ եւ գործով յոյժ հեռի, ծառայից ծառաս Տեառնս ընդ սմա (Փիլիպպոս Աղբակեցի Էջմիածնայ Կաթողիկոս) գոլով ի սպասաւորութիւնս յամենայն ուրեք, որ եմս երկրաւ Նախիջևանու, ի Շոռոթ գեղջէ:» Իր մասին կը յիշուի սր 1652-ին Երուսաղէմի Ժողովին կը մասնակցէր: Ուրեմն Առաքել հաւանաբար վարդապետական գաւազան ստացաւ Փիլիպպոս Աղբակեցիէ:

Դարձեալ 1648-ին, ըստ տապանագրին, Եպիսկոպոս է Ս. Կարապետի: Սակայն նոյն տապանագրին հայերէն